**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**20.04.2026 թվականին կնքված N ԵԿԱ-ԳՀԾՁԲ-26/06 գնման պայմանագրի**

ք. Երևան «23» « 06 » 2026թ.

«ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն՝ Ա. Տեր-Թովմասյանի, որը գործում է «ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԺՈԼԼԻ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենդրությամբ, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 20.04.2026թ. կնքված N ԵԿԱ-ԳՀԾՁԲ-26/06 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, հաշվի առնելով Պայմանագրով նախատեսված ծառայությունների ձեռքբերման նպատակով հատկացված ֆինանսական միջոցների չափը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման պահանջը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1. Կողմերը համաձայնվում են, որ Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի այդ նպատակով հատկացված ֆինանսական միջոցների՝ 2,000,000 (երկու միլիոն) ՀՀ դրամի սահմաններում:

1.2. Կողմերը որոշեցին Պայմանագրի N 2 հավելվածը՝ վճարման ժամանակացույցը, հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի N 1 հավելվածի:

**2. Այլ պայմաններ**

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: **Ընդ որում սույն համաձայնագրի պայմանները կիրառվում են 2026 թվականի հունիսի 18-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:**

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 հավելվածը կցվում է սույն համաձայնագրին և հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.**

**Պատվիրատու**
«ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան պողոտա 20
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 11500 352711227
ՀՎՀՀ՝ 00804091
Տնօրեն՝ Ա. Տեր-Թովմասյան

(ստորագրություն)
Կ.Տ

**Կատարող**
«ԺՈԼԼԻ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Ա. Ավետիսյան 112/2, 5-րդ տարածք
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՍՊԸ
Հ/Հ՝ 1570024518030100
ՀՎՀՀ՝ 00157488
Տնօրեն՝ Ջ. Մարտիրոսյան

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 1
«20» ապրիլի 2026թ. կնքված
N ԵԿԱ-ԳՀԾՁԲ-26/06 ծածկագրով պայմանագրի
«23» «06» 2026թ. կնքված
N1 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հ/հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| 1 | 85221000/1 | կենդանիների բժշկական սպասարկման ծառայություններ | — | — | — | — | — | 2,000,000 | 2,000,000 | 2,000,000 | 2,000,000 | 2,000,000 | 2,000,000 | 2,000,000 | 2,000,000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**Պատվիրատու**
«ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան պողոտա 20
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 11500 352711227
ՀՎՀՀ՝ 00804091
Տնօրեն՝ Ա. Տեր-Թովմասյան

(ստորագրություն)

Կ.Տ

**Կատարող**
«ԺՈԼԼԻ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Ա. Ավետիսյան 112/2, 5-րդ տարածք
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՍՊԸ
Հ/Հ՝ 1570024518030100
ՀՎՀՀ՝ 00157488
Տնօրեն՝ Հ. Մարտիրոսյան

(ստորագրություն)

Կ.Տ